ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գլադստոնի իրլանդական ինքնավարութեան օրինագիծը ընդունեց համայնքների ժողովում նաև երկրորդ ընթերցանութեամբ, ապրիլի 11-ին։ Իսկ մինչև երրորդ ընթերցումը ընդդիմադիր պահպանողական կուսակցութիւնը գործ դրեց իւր բոլոր ոյժը ժողովրդի մէջ յուզումն առաջ բերելու, հետևապէս և օրինագիծը, երրորդ ընթերցանութեան միջոցին, տապալելու համար։ Այդ նպատակով Բալֆուրը, պահպանողականների պարագլուխը համայնքների ժողովում, յետ չկանգնեց նոյն իսկ գրեթէ ապստամբական յորդորներից, ուղղած դէպի ժողովուրդը, մանաւանդ իւր պտոյտների ժամանակ Իրլանդիայի Ուլյստէրի վիճակում, ուր, ինչպէս յայտնի է, ժողովուրդը անգլիական ու շոտլանդական է և ոչ իրլանդական։ Բայց այդ բոլորը զուր աշխատանք եղաւ։ Համայնքների ժողովը, անկասկած է, որ ընդունելու է իրլանդական բիլլը, որից յետոյ օրինագիծը պէտք է տանի լորդերի ժողովը, ուր պահպանողական էլեմենտը անհամեմատ աւելի զօրեղ է։ Բայց ամենից գլխաւորը այն է, որ օրինագիծը համայնքների ժողովում ընդունի, որ արդէն դուրս է ամեն կասկածից։

Գերմանական զինուորական օրինագիծը ռայխստագում չընդունեց և ոչ իսկ այն փոփոխութիւններով, որոնցով կղերականների կուսակցութեան անդամ պատգամաւոր Գիւնէ՛ն ուզեց օգնել կառավարութեանը։ Թէ կանցլեր Կապրիւին և թէ կայսր Վիլհելմ II գործ դրեցին օրինագիծը ընդունել տալու համար իրանց ամբողջ հեղինակութիւնը, բայց իզուր։ Ռայխստագի լուծումը սպասւում էր այդ դէպքում և իրաք, հէնց որ Գիւնէի առաջարկն էլ չընդունեցին

դունեց՝ կայսեր հրամանով ռայխստագը լուծեց։ Նոր ընտրութիւնները նշանակուած են յունիսի 15-ին, նոր տոմարով։

Գերմանական կառավարութիւնը լիայոյս է, որ ազգը կընտրի մի ռայխստագ, որը կ՚ընդունի զինուորական օրինագիծը։ Մենք հաւատում ենք, որ ընտրութիւնների հետևանքը այդպէս կը լինի, այսինքն կը լինի յօգուտ կառավարութեան. բայց միևնոյն ժամանակ պէտք ասենք, որ ազգի այդպիսի վարմունքի մէջ անդամ չպէտք է տեսնել մեծ հաւատ դէպի կառավարութիւնը, այլ թերևս միայն ցանկութիւն՝ կառավարութեան պատիւը պահպանել և խոյս տալ մի կոնֆլիկտից, որի հետևանքները անհաշուելի կը լինեն։

Գերմանական այժմ արդէն լուծուած ռայխստագի վարմունքը, սակայն, սթափեցուցիչ։ Ներգործութիւն կ՚ունենայ ամբողջ Եւրոպայի վրայ, իբր մի զօրեղ բողոք անվերջ սպառազինութեան դէմ։

Իտալիայի թագաւորական զոյգի ամուսնութեան 25-ամեակի առիթով, որ տօնուեց Հռոմում, թագակիրներից ներկայ էր գերմանական կայսերական զոյգը, որը Հռոմ գնաց արտակարգ փառահեղութեամբ։ Նկատելու արժանի է այն, որ նաև այս մեծ դէպքում Աւստրիայի կայսրը չօգուտեց առիթից անձամբ ներկայ լինելու Հռոմում։ Գերմանական կայսեր այցելութիւնը նաև պապին չօգնեց սակայն որ ամբողջ կղերական կուսակցութիւնը ռայխստագի դրաւի յօգուտ զինուորական օրինագծի։

Z.